ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7
Հեռ. /0264/2-34-31
Ֆաքս /0264/2-34-31
Կայք gegharkunik.mtaes.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am

N 02/09/1992
20 05 2016թ.

<<ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 17.05.2016թ. N 284-ի 3 հարցման հայտնում եմ, որ մարզպետարանի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում առանձնացված են տեղեկատվություն ստանալու հարցումները և դրանք գրանցվում են քաղաքացիների դիմում-բողոքներից առանձին:

Ինչ վերաբերվում է տեղեկատվություն ստանալու հարցումների գրանցման և դասակարգման, դրանց վիճակագրության վարմանը՝ հայտնում եմ, որ Գեղարքունիքի մարզպետարանը չունի իր գերատեսչության կողմից մշակված տեղեկատվություն ստանալու հարցումների գրանցման և դասակարգման, ինչպես նաև դրանց վիճակագրության վարման կարգ: Տեղեկատվություն ստանալու հարցումների գրանցման և դասակարգման, ինչպես նաև դրանց վիճակագրության վարման վերաբերյալ խնդիրները Գեղարքունիքի մարզպետարանում կարգավորվում են ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կանոնադրությամբ, որը տեղադրված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքի http://gegharkunik.mtaes.am/statute/ էջում, Գեղարքունիքի մարզպետարանի ներքին գործավարության կարգով, որը տեղադրված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքի http://gegharkunik.mtaes.am/gorcavar/ էջում և ՀՀ կառավարության 2015թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշմամբ հաստատված տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման կարգով, որը տեղադրված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքի http://gegharkunik.mtaes.am/textn1/ էջում:

Հարգանքով՝ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Քարտուղարություն
2-25-12